# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2026 թվականի N 1229 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի «Քրեակատարողական ծառայողների ատեստավորման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1806-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 649-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի «Քրեակատարողական ծառայողների ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» N 634-Ն որոշմամբ հաստատված հավելվածում՝

1) 1-ին, 3-րդ, 5-րդ և 7-րդ տողերի «բավարար» սյունակում «200 000» թիվը փոխարինել «168 000» թվով.

2) 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ տողերի «բավարար» սյունակում «185 000» թիվը փոխարինել «138 000» թվով.

3) 16-րդ, 21-րդ, 27-րդ և 29-րդ տողերի «բավարար» սյունակում «170 000» թիվը փոխարինել «113 000» թվով.

4) 31-րդ, 36-րդ, 42-րդ և 45-րդ տողերի «բավարար» սյունակում «165 000» թիվը փոխարինել «143 000» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

4. Սույն որոշման 2-րդ կետը տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ատեստավորման արդյունքներով հավելավճարի իրավունք ձեռք բերած ծառայողների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ